

**ՀԱՇՎԱՐԿ**

Տեխնիկական սպասարկման (SU-1, SU-2), ընթացիկ և կապիտալ նորոգման աշխատանքների

Մեքենայի տեխնիկական սպասարկման (SU-1, SU-2), ընթացիկ և կապիտալ նորոգման համար մեկ տարվա ընթացքում մեկ ավտոմեքենայի համար միջինացված ըստ հանգույցների կատարվում են հիմնականում ներքոթվարկված աշխատանքները, որոնց մասով գները ընդունվել են նման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից առաջարկների հիման վրա:

**1. Շարժիչի նորոգման հիմնական աշխատանքներ**

Հ/Հ	Աշխատանքներ	Արժեքը (ՀՀ դրամ)
1	Շարժիչի հանում և տեղադրում	10,000
2	Շարժիչի քանդում և հավաքում	50,000
3	Շարժիչի դետալների լվացում, յուղազերծում	10,000
4	Ծնկաձև լիսեռի հղկում և հավասարակշռում	10,000
5	Գլանների գլխիկի ֆրեզերում	10,000
6	Բաշձիչ լիսեռի վռանների բնիկների մշակում և նստեցում	18,000
7	Գլանների գլխիկի արգոնային մշակում	10,000
8	Շարժիչի նորոգումից հետո յուղի և գտիչի պարտադիր փոխարինում (6*1,215 դրամ+800 որում)	8,090
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>126,090</b>

Թեև ավտոմեքենայի շարժիչի սպասարկման և նորոգման ժամանակ կատարվում են նաև այլ աշխատանքներ սակայն հաշվարկներում հիմք են ընդունվել վերը նշված հիմնական աշխատանքների արժեքները, որի համաձայն մեկ ամսվա ընթացքում մեկ ավտոմեքենայի շարժիչի նորոգման աշխատանքների միջինացված ծախսը կկազմի **10,508 դրամ**

**2. Փոխանցումների տուփի նորոգման հիմնական աշխատանքներ**

Հ/Հ	Աշխատանքներ	Արժեքը (ՀՀ դրամ)
1	Հանման և տեղադրման աշխատանքներ	7,000
2	Դետալների լվացման աշխատանքներ	3,000
3	Քանդման, նորոգման և հավաքման աշխատանքներ	15,000
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>25,000</b>

Թեև ավտոմեքենայի փոխանցումների տուփի սպասարկման և նորոգման ժամանակ կատարվում են նաև այլ աշխատանքներ սակայն հաշվարկներում հիմք են ընդունվել վերը նշված հիմնական աշխատանքների արժեքները, որի համաձայն մեկ ամսվա ընթացքում մեկ ավտոմեքենայի փոխանցումների տուփի նորոգման աշխատանքների միջինացված ծախսը կկազմի **2,083 դրամ**:

**3. Ավտոմեքենայի հետին կամրջակի և կարդանային փոխանցման հետ կապված** տարեկան կատարվում է միջին հաշվով 2-3 անգամ նորոգման աշխատանքներ, հիմք ընդունելով շահագործող կազմակերպությունների վիճակագրությունը: Հաշվարկներում հիմք է ընդունվել այդ հանգույցների տարեկան 2 անգամ յուրաքանչյուրի մասով (տարբեր տեսակների) աշխատանքների պարբերականությունը: Ավտոմեքենայի հետին կամրջակի նորոգման աշխատանքների միջին արժեքը կազմում է **8,000** դրամ, տարեկան՝ **16,000** դրամ, միջինացված ամսական ծախսը կկազմի **1,333 դրամ**: Ավտոմեքենայի կարդանային փոխանցման նորոգման աշխատանքների միջին արժեքը կազմում է **5,000** դրամ, տարեկան՝ **10,000** դրամ, միջինացված ամսական ծախսը կկազմի **833 դրամ**:

**4. Շարժիչի կցորդման մեխանիզմի նորոգման համար** անհրաժեշտ է հանել փոխանցումների տուփը, ուստի նորոգման դեպքում փոխանցումների տուփի հանման և տեղադրման աշխատանքների արժեքը գումարվում է նորոգման աշխատանքների արժեքին: Մեկ տարվա ընթացքում մեկ անգամ կցորդման մեխանիզմների նորոգման արժեքը կկազմի **10,000** դրամ, որից **3000** դրամը կցորդման մեխանիզմի արժեքն է, ամսական միջինացված ծախսը կկազմի **833 դրամ**:

**5. Մեկ ավտոմեքենայի մեղմիչների, զսպանակների և արգելակների** նորոգման աշխատանքները մեկ տարվա համար միջինը կատարվում է 4 անգամ: Յուրաքանչյուր անգամ աշխատանքների արժեքը կազմում է **5,000** դրամ, իսկ տարեկան ծախսը կկազմի՝ **20,000** դրամ, ամսական միջինացված ծախսը կկազմի **1,666 դրամ**:

**6. Յուրաքանչյուր ավտոմեքենա 2 տարին մեկ անգամ պարտավոր է գազաբալոնների ստուգում անցկացնել:** Մեկ միկրոավտոբուսի վրա տեղադրված է 3 գազաբալոն, յուրաքանչյուր գազաբալոնի լվացման, փորձարկման արժեքը կազմում է **6,000** դրամ, իսկ բալոնների քանդման և տեղադրման արժեքը **10,000** դրամ, հետևաբար մեկ ավտոմեքենայի գազաբալոնների սպասարկման աշխատանքների ամսական ծախսը կկազմի **1,167 դրամ**:

Այլ հանգույցների նորոգման աշխատանքների արժեքները հաշվարկներում չեն ներառվել:

**Մեկ ավտոմեքենայի մեկ ամսվա ընթացքում հիմնական հանգույցների նորոգման աշխատանքների ծախսը՝**

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Արժեքը /ՀՀ դրամ/
1	Շարժիչի նորոգման հիմնական աշխատանքներ	10,508
2	Փոխանցումների տուփի նորոգման հիմնական աշխատանքներ	2,083
3	Հետին կամրջակի նորոգման աշխատանքներ	1,333
4	Կարդանային փոխանցման նորոգման աշխատանքներ	833
5	Կցորդման մեխանիզմի նորոգման աշխատանքներ	833
6	Մեղմիչների, զսպանակների և արգելակների նորոգման աշխատանքներ	1,666
7	Գազաբալոնների սպասարկում	1,167
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ</b>	<b>18,423</b>